

30ին «ձեռամբ» Մովսէս կաթողիկոսին. ուր կ'ըսուի.

«Եկն եհաս լուր ի լսելիս մեր վասն նեղութեան ազգին մերոյ որ կան ընդ հովանեաւ Ձերում թագաւորութեանն, մանաւանդ ի մայրաքաղաքն Լեւ, թէ զեկեղեցիս առեալ են բռնութեամբ ի ձեռաց ազգիս մերոյ, եւ քահանայք եւ ժողովուրդք շրջին իբրեւ զոչխարս մոլորեալս՝ որոց ոչ իցէ հովիւ. զոր ոչ կարեմ մի ըստ միովէ յերկանել քո սուրբ թագաւորութեանդ վասն աղէտից: Եւ մեք յորմէ հետէ՝ զայսպիսի իրս լսեալ եմք, կսկիծ եւ տրտմութիւն եւ նեղութիւն շատ ունիմք՝ քան զայս որ յայլասեռիցս կու կրեմք: Վասն որոյ հարկ եղեւ ինձ գրել առ աստուածապաշտ նորածին թագաւորութիւնդ, շնորհաւորել: Եւ խնդրեմք ի քէն լալագին պաղատանօք, լուր աղաչանաց մերոց եւ խնդրուածոց. մի՛ եւ մի՛ եղիցի այսպիսի իր ի միջի Ձերում. եւ մի զնեւ զվէրս ի վերայ վերաց եւ խարան ի վերայ խոցից. եղիցի սէր եւ խաղաղութիւն ի միջի մերում... Հայցեմք ի մեծութենէդ Ձերմէ՝ զվոքրիկ հօտն զայն, այս ինքն զազգս մեր խնամով եւ սիրով պահեսցես վասն սիրոյ նախնեացն քոց, եւ մի սուտակասպասաց բանիւք վիրաւորեսցես զնոսա»:

Արդեամբք ալ Վլատիսլաւ թագաւոր ուղեց անձամբ միջնորդ ըլլալ, որ վերադարձուի եկեղեցին Հայոց. բայց Յիսուսեանք յայտնեցին թագաւորին, որ խնդիրը եկեղեցական ըլլալուն, պատեհ չէ որ աշխարհական